

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

«ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՈՐՎՐԴԻ ՆԻՍԻ»

01 մարտի 2012թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ Ս. Միքայելյանը:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան/

2. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/

3. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2012թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թ. Ղազարյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2012թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թադևոս Ղազարյանը:

/Կցվում են զեկուցումները և ելույթները/:

Ձեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար Վարդան Գևորգյանը, Դաստակերտ համայնքի ղեկավար Նաիրի Փիլոսյանը, Կապանի բժշկական կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանը, Սիսիանի թիվ 5 միջնակարգ դպրոցի տնօրեն Հովիկ Ալեքսանյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 **Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55